Ա. ԱՅՎԱԶՅԱՆ. Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ. ինքնական տեսություն, *Երևան 1998, 259 էջ:*

Վերջերս պատմաբան Արմեն Այվազյանը հրատարակել է վերոհիշյալ խորագրով ուշագրավ մի աշխատություն, որը կոչված է լրացնելու այն բացը, որ նկատվում էր հայոց պատմության ուսումնասիրության բնագավառում: Եթե առաջներում մենք տեղյակ էինք միայն արդի թուրք պատմագրության կեղծիքներին, ապա այժմ, շնորհիվ Արմեն Այվազյանի գնահատելի ջանքերի, մենք ծանոթանում ենք նաև արևմտյան և, մասնավորապես, արդի ամերիկյան պատմագրության հայոց պատմության մասին հայտնած տեսակետների հետ: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու մասից և աղբյուրների ու գրականության ընդարձակ ցանկից: Ներածության մեջ հեղինակը առանձնակի բարձրացնում է հայոց պատմության վիթխարի ռազմավարական նշանակությունը ներկա փուլում հայկական պետականության կայացման ճանապարհին հայ ազգային ոգին վառ պահելու գործում:

Ծանոթանալով Արմեն Այվազյանի սույն աշխատանքին մասնագետ-ընթերցողը անմիջապես համոզվում է, որ ինքը գործ ունի հայոց պատմության բացահայտ կեղծիքների ու աղավաղումների հետ, որոնց հեղինակները ամերիկյան և, դժբախտաբար, նաև ամերիկահայ փորձառու պատմաբաններն են (Ռ. Գ. Սյունի, Ռ. Թոմսոն, Պ. Քաուի և շատ ուրիշներ): Արժանին պետք մատուցել հեղինակին. նա արդի ամերիկյան պատմագրության մեջ տեսնում է նաև անաչառ գիտնականների, որոնց աշխատություններն ըստ արժանվույն բարձր են գնահատված:

Հայոց պատմությունը կեղծող, աղավաղող, նենգափոխող ամերիկյան պատմաբանների աշխատությունները, ընդհանուր առմամբ, գնահատվում են որպես «թուրքամետ»: Շատ մեղմ է ասված. իրերը պետք է կոչել իրենց անուններով: Ծանոթ լինելով հայոց պատմության հիմնահարցերին նվիրված արդի թուրք պատմագրության ներկայացուցիչների «աշխատություններին», մենք եկանք այն եզրակացությանը, որ Արմեն Այվազյանի գրքում ներկայացված ամերիկյան հեղինակները ոչ թե սոսկ դրսևորում են թուրքամետություն, այլ ուղղակիորեն նրանց ստաճող պատումները վերցնում *են բացահայտ պաշտպանության ներքո և հանդես են գալիս* փաստաբանների դերում: *Դա անշուշտ բխում է նախ և առաջ ԱՄՆ-ի և Թուրքիայի միջև կնքված ռազմավարական դաշինքից: Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ գերմանացի ֆաշիստ պատմաբանները, մասնակցելով թուրքական պատմագրական ընկերության (Turk Tarih Kurumu) անցկացրած* համագումարներին, *ուղղակիորեն ձայնակցում էին պանթուրքիստ պատմաբաններին: Բավական է ծանոթանալ առանձին հատորներով հրատարակված այդ համագումարների նյութերին: Մոտավորապես նույնը կատարվում է նաև մեր օրերում, ամերիկյան պատմաբանների հետ, միայն այն տարբերությամբ, որ անշուշտ* բացահայտ պանթուրքիստական *պնդումներ հնարավոր չէ ներկայումս կատարել: Այս քննադատությունը դուր կգա թե ոչ պարոնայք Ռ.Գ.Սյունիներին, Ռ.Թոմսոններին, Պ.Քաուիներին և այլոց, խնդիրը դրանով չի փոխվի: Ինքներդ դատեցեք. հայոց պատմությանը վերաբերող «աշխատություններում» արդի թուրք պատմագրության ներկայացուցիչները առավել խեղաթյուրել և նենգափոխման են ենթարկել հետևյալ հարցերը՝ ա) հայ-ուրարտական առնչությունները և հայերի ծագումնաբանությունը, բ) Հայկական լեռնաշխարհի և Հայաստան հասկացության անտեսումն ու ժխտումը, դրա փոխարինումը թուրքական Անատոլիայով, գ) դարերի ընթացքում հայերի քաղաքական ինքնուրույնության հերքումը, դ) հայկական աղբյուրները անարժանահավատ հայտարարելը, ե) Հայկական լեռնաշխարհում ի սկզբանե անտի հայերի աննշան փոքրամասնություն կազմելը, զ) մեծամտական, արհամարհական վերաբեր-*

մունքը գեպի հայ քաղաքակրթությունն ու մշակույթը, ատելությունը հայոց ազգային բնավորության նկատմամբ և վերջապես՝ էլ) Հայոց Մեծ Եղեռնի հարցում հայերի բնաջնջումը երիտթուրքերի կողմից նախօրոք ծրագրած լինելու ճշմարտության անտեսումն ու հերքումը, հայերի զոհերի թվի գիտակցված նվազեցումը, թուրքերին զոհեր ներկայացնելու միտումը ե այլն, և այլն: Արդ՝ լոկ հայտարարություններ անելու ցանկություն չունենալով, դիմենք կոնկրետ փաստերի: Իր «հայագիտական» գլուխգործոց համարվող «Հայացք գեպի Արարատ: Հայաստանը նոր պատմության մեջ» գրքում Ռ.Գ.Սյունին չի էլ թաքցնում իր գրքի բուն նպատակները, այն է՝ կազմալուծել [decompose] «հայ քաղաքական ազգայնականների քաղաքական գաղափարախոսության հիմքը, ըստ որի հայերի շարունակական գոյությունը, որպես պատմական ժողովուրդ, նրանց առաջացումը Հայկական լեռնաշխարհում, նրանց զինում է ինքնորոշման և պետականության իրավունքով ու նաև պատմականորեն վավերացված պահանջատիրությամբ այն տարածքների նկատմամբ, որ կազմում են Հայաստանը» (էջ 20): Ասված է առավել քան հստակ. ինչպես թուրք պատմաբանները, այնպես էլ Ռ.Գ. Սյունին փորձում է զրկել հայ ժողովրդին իր պատմական բնօրրանից:

Հետևելով թուրք պատմագրությանը, Ռ. Գ. Սյունին Հայկական լեռնաշխարհում, որը նա անվանում է Անատոլիա, հայերին համարում է եկվորներ: Մնում էր միայն վարվել պանթուրքիստ պատմաբանների նման՝ հայտարարելով, որ հայերը գալով Հայկական լեռնաշխարհ ոչնչացրեցին խուռի-ուրարտացիներին, ենթադրյալ նախաթուրքերին, կատարելով մարդկային պատմության մեջ առաջին ցեղասպանությունը: Ռ. Գ. Սյունին փորձում է բացառել որևէ գենետիկ կապեր ներկայիս հայերի և խուռի-ուրարտացիների միջև, անտեսելով այժմյան հայագիտության և արևելագիտության բոլոր նորահայտ գիտական նվաճումները, որոնք ապացուցում են հայերի տեղաբնիկ (աբորիգեն) լինելը:

Նույն Ռ. Գ. Սյունին «չի մոռանում» գենետիկ կապեր տեսնել ներկայիս ադրբեջանցիների և ադվանների միջև, հայտարարելով, որ ադվան ժողովուրդը թուրքախոս և չիա մահմեդական դարձած «այսօրվա ադրբեջանցիների ուղղակի նախնին է» (the direct ancestors of present-day Azerbaijanis): Գործը այնտեղ է հասնում, որ Ռ. Գ. Սյունին հայ ճարտարապետության գոհարներից մեկը՝ Գանձասարը, համարում է (ինչպես դա անում են ադրբեջանցի կեղծարարները) «ադվանական եկեղեցի» (էջ 34): Ռ.Գ.Սյունիի բունիաթովչչինային հետևելու այս բացահայտ դրսևորումը ոչ այլ ինչ է, քան թուրքական պատմագրության հետ կնքված ռազմավարական դաշինքի ածանցյալ արտահայտություն:

Ինչպես թուրք, այնպես էլ ամերիկյան պատմագրության մեջ Հայաստանը հռչակվում է աշխարհագրական ֆիկցիա: «Ամենից կարևոր և անհրաժեշտ եմ համարում ընդգծել հետևյալը, ժամանակին գրում էր Էսատ Ուրասը,–Հայաստանը չի կարող լինել որևէ այլ բան, քան աշխարհագրության վրա հիմնված հասարակ հիշողություն, տարածք՝ առանց քաղաքական սահմանների (էջ 38–39), իսկ Ռ. Գ. Սյունին, Հայաստանը նենդափոխելով Անատոլիայով, առաջարկում է օգտագործել անատոլիական հայեր հորջորջումը: Իր 1983 թ. լույս տեսած «Հայաստանը 20-րդ դարում» գրքույկում Ռ. Գ. Սյունին արել է իր համար շատ բնորոշ հետևյալ արտահայտությունը. «Բացի Խորհրդային Հայաստանից չկա այլ Հայաստան ու նաև չկա մի այլ ազգ, բացի նրանից, ով եբազում է Արարատի ստորոտում» (էջ 40):

Արդի թուրք և ամերիկյան պատմագրության ստահոդ պնդումներից մեկն էլ այն է, որ դարերի ընթացքում հայերը պետականություն չեն ունեցել և հաջորդաբար ենթարկվել են նվաճողների գերիշխանությանը: Նույն Էսատ Ուրասը այսպես է ներկայացնում իր ընթերցողներին հայոց քաղաքական պատմությունը: 1.Մինչև Ալեքսանդր Մեծի ժամանակաշրջանը Հայաստանը Պարսկաստանի մի նահանգ էր, 2. Մակեդոնյան տիրապետության ժամանակաշրջանում հայերին կառավարում էին մակեդոնացիների կողմից նշանակված տիրակալներ, 3. Սելևկյանների ժամանակ հայերը առաջվա նման կառավարվում էին օտարերկրյա տիրակալների կողմից, 4. Պարթևների ժամանակ հայերի վրա գերիշխում էին Պարթևների կողմից նշանակված կառավարիչները, 5. թե՛ այսպես կոչված Հարավա-

յին Հայաստանի (նկատի ունի Միջագետքն ու Օսրոյենը – Մ.Զ.) և թե՛ այստեղի թագավորները հայերի հետ ոչ մի առնչություն չունեն, 6. մինչև մ.թ.ա. 50թ. [sic!] Հայաստանը նվաճվեց Լուկուլլոսի և Պոմպեոսի կողմից: Հետևաբար Հայաստանը երկար ժամանակ ընկավ հռոմեական տիրապետության ներքո. երկու դար այդպես շարունակվեց, 7. Սասանյան տիրապետության հաստատումից հետո այսպես կոչված Հայաստանը գործիք դարձավ Պարսկաստանի և Արևելյան Հռոմեական կայսրության ձեռքում՝ 387 թ. երկիրը բաժանվեց երկու պետությունների միջև: 391 թ. հայկական իշխանությունը վերացվեց բյուզանդական, իսկ 429 թ.՝ պարսկական մասում» (Es'at Uras, Tarihte Ermeniler ve ermeni meselesi. Ankara, 1952, S. 86): Թուրքական սայլին լծված ամերիկյան պատմաբանների կարծիքն այս հարցում քչով է տարբերվում Էսատ Ուրասի ու այլոց միտումնավոր մոտեցումներից:

Հայոց պատմության հիմնահարցերին անդրադառնալիս ամերիկյան պատմագրությունը զարմանալիորեն համընկնում է թուրքականին ևս երկու հարցերում հայ պատմագրության անարժանահավատ լինելու և հայերի Հայկական լեռնաշխարհում չնչին փոքրամասնություն կազմելու թեզերի շուրջ: Սրդի թուրք պատմագրության ներկայացուցիչներ՝ Էսատ Ուրասը, Սագի Կոչաշը, Էնայեթուլլահ Օզկայան, Քյամուրան Գյուրյունը, Մ.Կաշկարլին, Էնվեր Կոնուկը և այլք մատնանշված հարցերին ընդարձակ էջեր են նվիրել և շատ հաճախ սա կազմում է իրենց «ուսումնասիրության» առանցքը[1]: Ռ. Թոմսոնի, Կ. Թումանովի, Պ. Քաուլի և այլոց V. դարի հայոց ոսկեդարյան գրականությունից արված թարգմանությունները և «լուսաբանումները» դարձյալ պետք է դիտարկել իբրև թուրք-ամերիկյան ռազմավարական դաշինքի արտահայտություն:

Ինչ վերաբերում է Ա. Այվազյանի գրքում բավականին մեծ տեղ տրված Ռ. Գ. Սյունիի կողմից Հովսեփ Էմինի գրքի[2] որոշ հատվածների բռնազբոսիկ մեկնաբանություններին, ապա պետք է ասել, որ դրանք դարձյալ հետապնդում են հետին նպատակներ: Ամբողջովին համաձայնվելով Արմեն Այվազյանի քննական բացատրություններին և բանասիրական ճշգրտումներին, պետք է ավելացնել, որ Ռ.Գ.Սյունին և նրա նմանները փորձում են ընթերցողին ներշնչել այն, որ իբր, հայ ազատագրական գաղափարները XVI–XVII դդ. խորթ էին հայ հասարակությանը, և որ հայերը լռելյայն ենթարկվում էին օսմանյան «բարեխնամ» կառավարության հոգատարությանը և որ հայերի և տիրապետող թուրքերի միջև հարաբերությունները միանգամայն բարվոք ու բարեկամական էին և միայն XVIII դարում Ռուսաստանի դրդմամբ հայերը խաբվեցին ռուսների «կեղծ» խոստումներից ու, հետևաբար, սրվեցին հայ-թուրքական հարաբերությունները: Եվ ահա թե ինչու Ռ. Գ. Սյունին Էրզրումի շրջակայքի հայ գյուղացիների վերաբերմունքը Հովսեփ Էմինի նկատմամբ համարում է «թշնամական»:

Հանրահայտ է, որ դարերի ընթացքում Հայաստանի գլխին պայթած քաղաքական տակնուվրայությունները հայ ժողովրդի մի մասին և հատկապես առևտրաարհեստագործական խավի ներկայացուցիչներին ստիպեցին թողնել հայրենիքը և կազմել հայկական արտաշխարհը, սակայն հայ բնակչության մեծագույն մասը մնաց իր հայրենիքում, կազմելով երկրի բնակչության մեծ մասը: Ի հեճուկս Ռ. Գ. Սյունիի, Զ. Ա. Բուռնությանի և այլոց պնդումներին, ևս մի անգամ հիշեցնենք նրանց, որ XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն բազմիցս անցնելով ողջ Հայաստանով գրում էր, որ «...Թոխատից մինչև Թավրիզ երկիրը բնակեցված է հայերով» և «չպետք է զարմանալ, եթե հիսուն հային ընկնում է մի մահմեդական»[3]:

Զափազանցություն չէր լինի, եթե նշեինք, որ յուրաքանչյուր հային մեծապես

1 Այդ մասին տե՛ս M. G. Kaşgazli. Kilikya tabi ermeni baronlugu tarihi. Ankara 1990, էջ 123–165.

2 [Emin Joseph], The Life and Adventures of Joseph Emin, an Armenian, Written in English by Himself. Calcutta, 1918. See edition.

3 Տե՛ս Jean Baptiste Tavernier. Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. Paris, 1713, p.79:

հուզող Մեծ Եղեռնի հարցում մեր մատնանշած ամերիկյան և թուրք պատմագրության «տեսակետները» ամբողջովին համընկնում են: Անշուշտ, գովելի բացառություն են կազմում Վահագն Տատրյանի և շատ ուրիշների մեծարժեք աշխատությունները (էջ 81–182): Ռ. Գ. Սյունին, կրկնելով թուրք պատմաբաններին, գրում է, որ XIX դարի վերջերից հայ-թուրքական հակամարտությունները հրահրել են հայ ազգայնականները թուրքական Անատոլիային տիրանալու նպատակով, իսկ թուրքերը ընդամենը «պատասխանել են»: Եվ դարձյալ հետևելով թուրք պատմագրությանը, Ռ. Գ. Սյունին նշում է, որ 1915 թ. Հայոց Եղեռնը նախապես ծրագրված չէր, իր խոսքերով ասած «վերևից մանրակրկիտ կերպով կառավարված ոչնչացման ծրագիր» չէր, այլ հայերին կոտորելու երիտթուրքական կառավարության վճիռն ընդունվել է պատերազմական իրավիճակից բխող քաղաքական և հոգեբանական ճնշումների ներքո (էջ 87): Դիմելով սրբապղծության և ձայնակցելով իր թուրք գործընկերներին, Ռ. Գ. Սյունին ամեն կերպ փորձում է նվազեցնել հայ նահատակների թիվը:

Արմեն Այվազյանի աշխատության երկրորդ մասը նվիրված է ամերիկյան «հայագիտության» ընդհանուր միտումների, զարգացումների և դրանց հետևանքների քննարկման հարցերին: Այստեղ, հիրավի, կատարված է պատմական ու բանասիրական մեծ քրտնաջան աշխատանք և, հիմնականում, արդարացի գիտական քննադատության են ենթարկված Ռ. Թոմսոնի և այլոց կատարած «հայագիտական» մարզանքները: Ըստ ամենայնի, երևում է հեղինակի անգլերեն լեզվի հմտալից իմացությունը: Միանգամայն ընդունելի ենք համարում կատարված նուրբ պատմական և բանասիրական դիտարկումներն ու ճշգրտումները:

Ամփոփենք: Արմեն Այվազյանի սույն գիրքը կարելի է դասել գիտական սխրագործությունների շարքը: Հեղինակը, հիրավի, ցուցաբերել է քաղաքացիություն և հայրենասիրություն՝ փորձելով ակադեմիական ղեկավար շրջաններին հիշեցնել, որ ամերիկյան և ամերիկահայ որոշ հայտնի պատմաբանների նկատմամբ որդեգրած մոտեցումը գիտական ու քաղաքական առումով սխալ և վնասաբեր հետևանքների է հասցնում: Որոշ վերապահումով համաձայնվում ենք հեղինակի այս մտահոգությանը:

Վերջում կուզենայինք Այվազյանին որոշ դիտողություններ անել և խորհուրդներ առաջարկել. դրանք են՝ ա) պետք է սառնարյուն լինել արված դատողություններում և դուրս չգալ ակադեմիական բառապաշարի շրջանակներից, բ) պետք չէ արծարծել դեռևս քաղաքացիություն չստացած և միջազգային ճանաչման չարժանացած սենսացիոն «նորությունը», ինչպիսին է Արտակ Մովսիսյանի կողմից ուրարտական ժամանակաշրջանի հիերոգլիֆների հայերեն կարդալու փորձը, այլ կերպ ասած՝ չի կարելի ընկնել հակառակորդի հարվածի ներքո, գ) աշխատությունը կշահեր, եթե ընթերցողի համար ավելի առարկայական դառնար թուրքական պատմագրության հետ սերտ աղերսների մեջ մտած ամերիկյան մի շարք պատմաբանների հարազատ կապերն ապացուցող ցցուն դրվագների մանրամասն համադրումը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Մ. Կ. ԶՈՒԼԱԼՅԱՆ